ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.05.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/114

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Պահապան» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/18» ծածկագրով գնանշման հարցում, հանդերձանքի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 21.04.2020թ.-ի թիվ 26/26-1/5853-2020 գրությամբ «Պահապան» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 16.04.2020թ.-ի թիվ ՊՆ/ՊՆ/02/1243-2020 գրության հիման վրա, 21.04.2020թ.-ին «Պահապան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 21.04.2020թ.-ին:

22.04.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/114 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

19.05.2020թ.-ին և 21.05.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 19.05.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 21.05.2020թ.-ին:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 16.04.2020թ.-ի թիվ ՊՆ/ՊՆ/02/1243-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Պահապան» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտի հավելված 1.1-ում՝ 1-ից-13-րդ չափաբաժինների մասով, գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ ընթացակարգի հրավերի պայմաններին: «Պահապան» ՍՊԸ-ին սահմանված կարգով համակարգի (armeps.am) միջոցով ծանուցվել է շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները: Վերջինս ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացրել է շտկված հավելված 1.1-ի, որի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանագրել է անհամապատասխանություններ ընթացակարգի հրավերի պայմաններին, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշման հավելված 1-ի 42-րդ կետի պահանջները, մերժել է «Պահապան» ՍՊԸ-ի հայտը:»:

Կից ներկայացվել է «Պահապան» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:

3. <u>«Պահապան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 22.04.2020թ.-ին գրությամբ դիմել է «Պահապան» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.04.2020թ.-ի թիվ 26/26-1/5853-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, 09.04.2020թ.-ին ներկայացրած գրությամբ հայտնել է հետևյալը.

««Ուսումնասիրելով թիվ ՍՅ-ԼՕ-2020/114 ընթացակարգի նախաձեռնման համար հիմք հանդիսացած փաստաթղթերը, գտնում ենք, որ նախաձեռնումը հիմնազուրկ է, իսկ նախաձեռնված ընթացակարգը ենթակա մերժման հետևյալ պատճառներով՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ Օրենք) 4-րդ հոդվածը սահմանում է «Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից»: Այլ ակտերից է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետ Կարգ), ուստի քննակվող հարցերը կուսումնասիրենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ Օրենսգիրք), Օրենքի և Կարգի պահանջների լույսի ներքո:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի համաձայն «պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցվում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները»:

ՀՀ ՊՆ կարիքների համար անհրաժեշտ ապրանքների ձեռք բերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/18» ծածկագրով ընթացակարգին 19.03.2020թ. մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Պահապան» ՍՊԸ-ն: 07.04.2020թ. նշված ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Պահապան» ՍՊԸ-ին միջնորդություն է ուղարկվել ներկայացված հայտի 1.1 հավելվածում

տեղ գտած 2 անհամապատասխանությունները վերացնելու համար: Չանտեսելով միջնորդության պահանջը, նույն օրը մենք հայտում ավելացրել և հանձնաժողովին ենք ուղարկել հավելված 1.1-ի 13-րդ չափաբաժնում բացակայող տեխնիկական բնութագրի բացակա հատվածը, իսկ հավելված 1.1-ի 1-ից 13-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրում ներառնված «կամ համարժեք» արտահայտությունը թողել ենք անփոփոխ, որի պատճառով էլ գնահատող հանձնաժողովը 09.04.2020թ. մերժել է «Պահապան» ՍՊԸ-ի հայտը, պատճառաբանելով արձանագրված «անհամապատասխանությունները», ի նկատի ունենալով հայտի Հավելված 1.1-ի 1-ից 13-րդ չափաբաժիններում «կամ համարժեք» արտահայտությունների չհստակեցումը:

Գտնում ենք, որ նշված հիմքով հայտի մերժումը ապօրինի, գնահատող հանձնաժողովի սուբյեկտիվ կամարտահայտության արդյուք է, քանի որ՝

Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն «Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանաջ կամ հղում պարունակեն որնէ առևտրային նշանի, ֆիրմայի անվանմանը, արտոնագրի, էսքիզի կամ մոդելի, ծագման երկրի կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց»: Հղումներ օգտագործելու դեպքում, հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը»: Այս համատեքստում անհասկանալի է, թե ինչ է նկատի ունեցել գնահատող հանձնաժողովը «անհամապատասխանությունն ասելով, քանի որ մեր հայտի բոլոր 13 չափաբաժիններում նշված են ճիշտ նույն արտիկուլները, ինչ սահմանել է Պատվիրատուն և որպես հավելում նշվել է «կամ համարժեք» բառերը:

Ոչ Օրենսգրքում, ոչ Օրենքում և ոչ էլ Կարգում չկա գեթ մեկ հոդված, մեկ նորմ, որ արգելի հայտերում արտիկուլին զուգահեռ «կամ համարժեք» արտահայտության օգտագործումը: Դա միայն ՊՆ Գնահատող հանձնաժողովի սուբյեկտիվ պահանջն է, որը պարտադիր իրավակիրառ բնույթ ունենալ չի կարող հատկապես ներկա ժամանակաշրջանում, երբ կապված կորոնովիրուսի տարածման հետ, ՀՀ-ում և աշխարհում առաջացել է ֆորս-մաժորային իրավիճակ:

Գնահատող հանձնաժողովի 07.04.2020թ. միջնորդության պահանջը եղել է այն, որ մեր կողմից ներկայացված հայտի Հավելված 1.1-ի 1-ից 13-րդ չափաբաժինների փաստաթղթերում հստակեցվեն տեխնիկական բնութագրում ներառնված «կամ համարժեք» արտահայտությունը, այսինքն հայտում ստույգ նշենք, կամ հրավերում նշված ապրանքատեսակների արտիկուլները, կամ հիշատակված «համարժեք»

արտահայտությամբ ի նկատի ունեցված ապրանքատեսակների արտիկուլները: Հայտում արտիկուլի նշումը կլիներ խաբեություն Պատվիրատուի նկատմամբ, քանի որ ներկա ֆորս-մաժորային իրավիճակում ռեալ և իրատեսական չէ կոնկրետ որևէ երկրից ստույգ արտիկուլի ապրանքատեսակի ներկրումը երաշխավորելը: Տասնամյակների տնտեսական գործունեության իրականացման պայմաններում մեզ հայտնի են ԱՊՀ տարածքում և այլ երկրներում (Ռուսաստան, Բելորուս, Չինաստան, Հնդկաստան, Պակիստան, Թուրքիա, Թուրքմենիա և այլն) տեքստիլի արտադրությամբ զբաղված հարյուրավոր ձեռնարկություններ, որոնք արտադրում են, ինչպես վերը հիշատակված, այնպես էլ համարժեք արտիկուլների արտադրանք: Մեր ունեցած տեղեկությունների համաձայն, ինչպես ԱՊՀ, այնպես էլ աշխարհի մյուս պետությունները ներկա պահին գտնվում են արտաքին աշխարհից մեկուսացված, կամ կիսամեկուսացված վիճակում, իսկ տեքստիլ ու կիսաֆաբրիկատներ արտադրող ձեռնարկությունները հիմնականում փակված վիճակում:

Վերը հիշատակված հրավերի 1-ից 13-րդ չափաբաժիններում նշված են տասնյակ արտիկուլների ապրանքատեսակներ: 2020թ. ապրիլի 7-ի դրությամբ, ֆորս-մաժորային իրավիճակի պայմաններում անհնարին էր հետաքարքրվել այդ տասնյակ արտիկուլների կամ դրանց համարժեք արտիկուլների ձեռք բերման աղբյուրներով, քանի որ մինչև մրցույթի ավարտը և հետագայում պայմանագրի կնքումը բավականին ժամանակ էր անցնելու և կորոնավիրուսի տարածման հետ կապված անհնարին է կանխատեսել թե ամիսներ անց աշխարհում ինչ աշխարհաքաղաքական իրավիճակ կլինի, որ պետությունները կմնան մեկուսացված, որոնք՝ կիսամեկուսացված, որ ձեռնարկությունները կգործեն, որոնք կմնան փակ, որ պետությունների հետ Հայաստանը կունենա բեռնափոխադրումների կոմունիկացիաներ, որոնց հետ ոչ: Այնպես որ հայտում «կամ համարժեք» արտահայտությունը նույնությամբ թողնելը ոչ թե Պատվիրատուի պահանջի անտեսումն է, այլ նպատակ է հետապնդել մրցույթում կոնկրետ ապրանքատեսակի չափաբաժնի մասով հաղթող ճանաչվելուց և պայմանագիր կնքելուց հետո միայն զբաղվելու կոկրետ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված արտիկուլի կամ համարժեք արտիկուլի արտադրանքի կամ հումքի որոնման, պատվիրման, գնման և ՀՀ ներկրման հարցերով:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն «Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն տվյալ պայմաններում

արտակարգ և անկանխատեսելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:»:

Տվյալ դեպքում կոնկրետ արտիկուլների չնշումը ուղղակիորեն կապված է եղել նշված հոդվածում նախատեսված անհաղթահարելի ուժի առկայությամբ ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ողջ աշխարհում: Բոլոր դեպքերում այլ արտիկուլի ապրանքները իրենց կշռով ու բաղադրությամբ անպայմանորեն պետք է լիարժեք համապատասխանեն Պատվիրատուի կողմից պատվիրված արտադրանքի կշռին ու բաղադրությանը: Մինչև Պատվիրատուին մատակարարելը դրանք պետք է անցնեին համապատասխան լաբորատոր հետազոտություն, ինչպես նշված է մեր հայտում:

Վերոգրյալի հիման վրա խնդրում ենք «Պահապան» ՍՊԸ-ին Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված սույն ընթացակարգը մերժել:»:

4. <u>ՍՑ-LO-2020/114 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հանդերձանքի ձեռքբերման նպատակով 18.03.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով 1-13-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Պահապան» ՍՊԸ-ն:

Մասնակիցը թիվ 1.1 հավելվածով՝ 1-13-րդ չափաբաժինների համար առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով ներկայացված տեխնիկական բնութագրերով նշել է «կամ համարժեք» բառերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 26.03.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Պահապան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում թիվ 1.1 հավելվածի 1-13-րդ չափաբաժիններում անհրաժեշտություն է առաջացել հստակեցնել համապատասխան ցուցանիշները, որոնց մասով տեխնիկական բնութագրում ներառվել են նաև «կամ համարժեք» բառերը:

Բացի այդ թիվ 1.1 հավելված 13-րդ չափաբաժնում բացակայում է հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրի հետևյալը մասը. «փաթեթավորումը եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ մինչև 5 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 հատ: Արկղերի չափսերը՝ լայնությունը 56 սմ, բարձրությունը 20սմ և երկարությունը՝ 100սմ: Արկղերը պիտակավորված՝ պիտակների վրա պետք է նշված տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումը՝ 2%:

Անհրաժեշտության դեպքում պատվիրատուի պահանջով յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ արտոնագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն:»:

Նույն արձանագրության համաձայն՝ 07.04.2020թ.-ին գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, կասեցրել է հայտերի փաստաթղթերի ամփոփման նիստը և ծանուցել է Մասնակցին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ:

Հանձնաժողովի քարտուղարը 07.04.2020թ.-ին նույնաբովադակ ծանուցում է ուղարկել Մասնակցին:

«Պահապան» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել արձանագրված անհամապատասխանությունը, որի հիման վրա 09.04.2020թ.-ին Հանձնաժողովը մերժել է Մասնակցի հայտը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.04.2020թ.-ի թիվ 26/26-1/5853-2020 գրությամբ «Պահապան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացվում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հրավերի 4.3-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում՝ Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հանդերձանքի ձեռքբերման նպատակով 18.03.2020թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու

նպատակով 1-13-րդ չափաբաժինների մասով հայտ ներկայացրած «Պահապան» ՍՊԸ-ն թիվ 1.1 հավելվածով՝ 1-13-րդ չափաբաժինների համար առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով ներկայացված տեխնիկական բնութագրերով նշել է «կամ համարժեք» բառերը:

Հանձնաժողովի 26.03.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Պահապան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում թիվ 1.1 հավելվածի 1-13-րդ չափաբաժիններում անհրաժեշտություն է առաջացել հստակեցնել համապատասխան ցուցանիշները, որոնց մասով տեխնիկական բնութագրում ներառվել են նաև «կամ համարժեք» բառերը:

Բացի այդ թիվ 1.1 հավելված 13-րդ չափաբաժնում բացակայում է հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրի հետևյալ մասը. «փաթեթավորումը եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ մինչև 5 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 հատ: Արկղերի չափսերը՝ լայնությունը 56 սմ, բարձրությունը 20սմ և երկարությունը՝ 100սմ: Արկղերը պիտակավորված՝ պիտակների վրա պետք է նշված տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումը՝ 2%:

Անհրաժեշտության դեպքում պատվիրատուի պահանջով յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ արտոնագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն:»:

Նույն արձանագրության համաձայն՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ 07.04.2020թ.-ին գնահատող հանձնաժողովը կասեցրել է հայտերի փաստաթղթերի ամփոփման նիստը և ծանուցել է Մասնակցին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ:

Հանձնաժողովի քարտուղարը 07.04.2020թ.-ին նույնաբովադակ ծանուցում է ուղարկել Մասնակցին:

Սակայն «Պահապան» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել արձանագրված անհամապատասխանությունը, որի հիման վրա 09.04.2020թ.-ին Հանձնաժողովը մերժել է Մասնակցի հայտը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ չշտկելով հայտում առկա արձանագրված անհամապատասխանությունները, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նշվածով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մասնակիցը պետք է ընդգրկվի գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Պահապան» ՍՊԸ-ն, Պատվիրատուի կողմից հրավերի 8.9-րդ կետով սահմանված շտկման ժամանակահատվածում, չշտկելով արձանագրված անհամապատասխանություններ, մասնավորապես՝ չշտկելով թիվ 1.1 հավելվածում 1-13-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում նշված «կամ համարժեք» բառերը, ինչպես նաև չներառելով 13-րդ չափաբաժնում առկա մյուս անհամապատասխանությունները՝ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած

պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.04.2020թ.-ի թիվ 26/26-1/5853-2020 գրությամբ «Պահապան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2020/114 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Պահապան» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ